# Արձանագրություն N 2

**«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-24/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Ծաղկաձոր համայնքի Արտավազ բնակավայրի 3-րդ փողոցի շարունակելի հատվածի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ»-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք.Ծաղկաձոր 23 փետրվար 2024թ.
ժամը 17:00

*Մասնակցում էին հանձնաժողովի*
*նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Գարիկ Գևորգյան /ԳՊ ԳԱՊ/*
*անդամներ՝*
*Արտավազ բնակավայրի վարչական ղեկավար Ռեմ Հովհաննիսյան /ԲԱ/,*
*Ծաղկաձոր համայնքի «ԱՐԾԱՓ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գագիկ Բաբաջանյան /ԳԱ/,*
*աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /բարեվարքության հարցերով կազմակերպիչ/ Սամվել Այոյան /ԲԱ/,*
*Հանձնաժողովի անդամ Հայկ Բաբայանը նիստին չի մասնակցում արձակուրդում գտնվելու պատճառով*
*քարտուղար՝ Ա Ավետիսյան*

## 1. Տեղեկատվություն՝ «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-24/4»ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի,օրվա և ժամի վերաբերյալ

**«ԾՔ-ԳՀԽԾՁԲ-24/4»** ծածկագրով գնանշման հարցման հայտերը էլեկտրոնային ձևով բացվել են www.armeps.am կայքի միջոցով, 2024 թվականի փետրվարի 23-ին, ժամը 17:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

## 2. Տեղեկատվություն՝ «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-24/4» ծածկագրով ընթացակարգի գնման առարկայի հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գները՝ մեկ թվով արտահայտված.

| Հ/հ | Ծառայության անվանումը | Հափաբաժնի ընդհանուր գնման գինը |
|---|---|---|
| 1 | «Ծաղկաձոր համայնքի Արտավազ բնակավայրի 3-րդ փողոցի շարունակելի հատվածի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ» | 1095828 |

## 3. «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-24/4» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

3.1 Գնման ընթացակարգին հայտ ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

| *h/h* | *Մասնակիցների անվանումը* | *Գործունեության հասցեն,ՀՎՀՀ-ն և էլ.փոստի հասցեն* |
|---|---|---|
| 1. | «ՇԻՆ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ | Ք.Երևան,Սասունցի Դավթի նրբ.տուն 65, 00492025,shinkontrol@mail.ru |
| 2. | «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ | Գեղարքունիքի մարզ,գ.Գեղամավան, 2փ.3նրբ.տ.14, 08624633, texno.shin@mail.ru |
| 3. | «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ | ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Վ. Գետաշեն, Ա թաղ. 5-րդ փող. տ.3, bulgarollc@yandex.ru |

| | | |
|---|---|---|
| 4. | «ՍՈՒԱՐ» ՍՊԸ | Ք.Երևան,Շենգավիթ ՎՇ,Բագրատունյաց 15-54, 02290783, suro4350@gmail.com |

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թվականի փետրվարի 26-ին,ժամը 10:00-ին:

***2024 թվականի փետրվարի 26-ին,ժամը 10:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.***

***4.Տեղեկատվություն՝ «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-24/4» ծածկագրով ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ***

---

ՀՀ դրամ

| Չափաբաժնի անվանումը | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր |
|---|---|---|---|---|
| 1.«Ծաղկաձոր համայնքի Արտավազ բնակավայրի 3-րդ փողոցի շարունակելի հատվածի կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ» | «ՇԻՆ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ | 300000 | 60000 | 360000 /երեք հարյուր վաթսուն հազար/ |
| | «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ | 319000 | - | 319000 /երեք հարյուր տասնինը հազար/ |
| | «ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ | 450000 | - | 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ |
| | «ՍՈՒԱՐ» ՍՊԸ | 690000 | - | 690000 /վեց հարյուր իննսուն հազար/ |

***Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշգրտությունը /տառերով,ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը/ համապատասխանում է (ճիշտ է):***

**5.Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին**

---

*Ընդունել ի գիտություն, որ*

**5.1Մասնակիցների կողմից** ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «ԲՈՒԼԳԱՐՈ» ՍՊԸ – *Հայտով չեն ներկայացվել նախկինում կատարված համանման պայմանագիրը,Հավելված 3-ը, մասնագետի անձնագիրը,դիպլոմը և աշխատանքներում ներգրավվելու համաձայնությունը:*
- «ՇԻՆ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ – *Նախկինում կատարված համանման պայմանագիրը,լիցենզիան,մասնագետի համաձայնությունը,դիպլոմը,անձնագիրը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չեն*
- «ՍՈՒԱՐ» ՍՊԸ - *Նախկինում կատարված համանման պայմանագիրը,լիցենզիան,լիազորագիրը,մասնագետի համաձայնությունը,դիպլոմը,անձնագիրը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չեն:*

5.2 Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, ծանուցում ուղարկել և առաջարկել մասնակիցներին մինչև**

**կասեցման ժամկետի ավարտը՝ 27.02.2024թ., ժամը 18:00-ն,** շտկել անհամապատասխանությունները, ոչ գնային պայմանները չշտկելու դեպքում՝ դրանք կգնահատվեն 0 միավոր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

**6. Տեղեկություններ հարցումների և պատասխանների վերաբերյալ**

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել,պարզաբանումներ չեն ներկայացվել:

**7. «ԾՔ-ԳՀԽԾՁԲ-24/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին**

7.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2024 թվականի փետրվարի 28-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

| Գնահատող հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը | Ստորագրությունը |
|---|---|
| Նախագահ՝ Գարիկ Գևորգյան | |
| Անդամներ՝ Ռեմ Հովհաննիսյան | |
| Գագիկ Բաբաջանյան | |
| Սամվել Ալոյան | |
| Հայկ Բաբայան | - |
| Քարտուղար՝ Ա.Ավետիսյան | |